ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզ քաղաք Ստեփանավան
Երկու հազար տասնհինգ թվականի, դեկտեմբերի քսանհինգին

Մենք՝ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, ի դեմս քաղաքապետ Միքայել Մինասի Ղարաքեշիշյանի, 23 հուլիսի 1959 թվականի ծնված, անձնագիր՝ AN0744777, տրված՝ 09.12.2013 053, բնակվող՝ քաղաք Ստեփանավան, Միքայելյան փողոց 1-ին նրբ.տուն թիվ 9/ինը/, այսուհետ ,,ՎԱՐՁԱՏՈՒ,, մի կողմից և ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, որի անունից համաձայն թիվ ՄՄ/ԱգԱ-1/11707-15լիազորագրի, տրված՝ 22.12.2015թվ., հանդես է գալիս ծառայության աշխատակազմի Ստեփանավանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Արթուր Սերգեյի Պապայանը, 05 մարտի 1974 թվականի ծնված, անձնագիր՝ AH0564215, տրված՝ 09.04.2008 053, բնակվող՝ քաղաք Ստեփանավան, Չարենցի փողոց 10/5, այսուհետ ,,ՎԱՐՁԱԿԱԼ,, մյուս կողմից, կազմեցինք սույն համաձայնությունը հետևյալի վերաբերյալ.

1. Մեր կողմից Ստեփանավան նոտարական տարածքում 10.04.2013 թվականին, թիվ 1166 սեղանամատյանով կնքված անշարժ գույքի /ոչ բնակելի տարածքի/ Ստեփանավան քաղաքի, Ս.Սարգսյան փողոց (նախկին Միլիոնի) թիվ 1/մեկ/ հասցեում գտնվող վարչական շենքի 83.88քմ /ութսուներեք ամբողջ ութսունութ/ մակերեսով տարածքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:
2. Համաձայն Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող ոչ բնակելի տարածքի վարձակալության վարձավճարը փոփոխելու մասին ՀՀ Ստեփանավան համայնքի ավագանու 26 հոկտեմբերի 2015թվ. թիվ 36-Ա որոշման՝ 2016թվ. հունվարի 1-ից վարձավճարի չափը սահմանել 1քմ. համար ամսեկան 1800 ՀՀ դրամ, ընդհանուր 83.88քմ-ի համար՝ 151000/հարյուր հիսունմեկ հազար/ՀՀ դրամ:

Համաձայնությունը կազմվել և վավերացվել է 3/երեք/ օրինակից, որի մեկ օրինակը պահվում է Ստեփանավան նոտարական տարածքում, մյուս երկուսը տրվում է Կողմերին:

ՎԱՐՁԱՏՈՒ
Լոռու մարզ, Ստեփանավան համայնք
ի դեմս քաղաքապետ
Միքայել Մինասի Ղարաքեշիշյանի

ՎԱՐՁԱԿԱԼ
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական
ապահովության ծառայության
ապահովության պետական ծառայություն
ի դեմս Մինաս Մինասյանի, որի անունից
հանդես է գալիս Արթուր Սերգեյի Պապայանը

2015թվ., դեկտեմբերի քսանհինգին, սույն համաձայնությունը վավերացվել է իմ՝ Ստեփանավան նոտարական տարածքի նոտար՝ Արսեն Հարությունյանի կողմից:
Համաձայնությունը Կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ:
Նրանց ինքնությունը, գործունակաությունը, իրավաբանական անձի իրավունակությունները, ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:
Գրանցամատյան թիվ 2762
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ ,,Պետական տուրքի մասին,, և ,,Նոտարիատի մասին,, օրենքների:
Նոտար՝ Ա. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբերի 2015 թվականի N 36-Ա

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.04.2013թ. Ստեփանավան համայնքի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև կնքվել է ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր, համաձայն որի Ստեփանավան համայնքը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը վարձակալությամբ տրամադրել է ոչ բնակելի տարածք: Նշված պայմանագրում վարձավճարի չափ է որոշվել 1 քմ-ի համար ամսեկան 1620 ՀՀ դրամ, ընդհանուր 83.88 քմ- 135885 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի առաջարկությունը, հաշվի առնելով, որ պայմանագիրը կնքելուց հետո բարձրացել են էլեկտրաէներգիայի, գազի սակագները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ մասով, Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է՝*

1. 2016թ. հունվարի 1-ից Ստեփանավան համայնքի կողմից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը վարձակալությամբ տրամադրված ոչ բնակելի տարածքի վարձավճարի չափը սահմանել 1 քմ-ի համար ամսական 1800 ՀՀ դրամ, ընդհանուր 83.88 քմ-151000ՀՀ դրամ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Մ.ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ԱՇԽ. ՔԱՐՏՈՒՂԱՐ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

<< Լոռու մարզ քաղաք• Ստեփանավան
Երկու հազար տասչորս թվականի, փետրվարի տասներեքին

Մենք՝ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, ի դեմս քաղաքապետ Միքայել Մինասի Ղարաքեշիշյանի, 23 հուլիսի 1959 թվականի ծնված, անձնագիր՝ AN0744777, տրված՝ 09.12.2013 053, բնակվող՝ քաղաք Ստեփանավան, Միքայելյան փողոց 1-ին նրբ.տուն թիվ 9/ինը/, այսուհետ ,,ՎԱՐՉԱՏՈՒ,, մի կողմից և ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, որի անունից համաձայն թիվ ՄՄ/ԱգԱ-1/608-14 լիազորագրի, տրված՝ 31.01.2014թվ., հանդես է գալիս ծառայության աշխատակազմի Ստեփանավանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Արթուր Սերգեյի Պապյանը, 05 մարտի 1974 թվականի ծնված, անձնագիր՝ AH0564215, տրված՝ 09.04.2008 053, բնակվող՝ քաղաք Ստեփանավան, Չարենցի փողոց 10/5, այսուհետ ,,ԿԱՐՉԱԿԱԼ,, մյուս կողմից, կազմեցինք սույն համաձայնությունը հետևյալի վերաբերյալ:

Մեր կողմից Ստեփանավան նոտարական տարածքում 10.04.2013թվականին, թիվ 1166 սեղանամատյանով կնքված անշարժ գույքի /ոչ բնակելի տարածքի/ Ստեփանավան քաղաքի, Միլիոնի փողոց թիվ 1/մեկ/ հասցեում գտնվող վարչական շենքի 83.88/ութսուներեք ամբողջ ութսունութ/քմ մակերեսով տարածքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

Համաձայնությունը կազմվել և վավերացվել է 3/երեք/ օրինակից, որի մեկ օրինակը պահվում է Ստեփանավան նոտարական տարածքում, մյուս երկուսը տրվում է Կողմերին:

ՎԱՐՉԱՏՈՒ
Լոռու մարզ, Ստեփանավան համայնք
ի դեմս քաղաքապետ
Միքայել Մինասի Ղարաքեշիշյանի

ԿԱՐՉԱԿԱԼ
<< ԱՍՀՆ սոցիալական
ապահովության ծառայության
ապահովության պետական ծառայություն
ի դեմս Մինաս Մինասյանի, որի անունից
հանդես է գալիս Արթուր Սերգեյի Պապյանը

2014թվ., փետրվարի տասներեքին, սույն համաձայնությունը վավերացվել է իմ՝ Ստեփանավան նոտարական տարածքի նոտար՝ Արսեն Հարությունյանի կողմից:
Համաձայնությունը Կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ:
Նրա ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունները, ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:
Գրանցամատյան թիվ 410
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն << ,, Պետական տուրքի մասին,, և ,, Նոտարիատի մասին,, օրենքների:
Նոտար՝ Ա. Հարությունյան

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն Երկու հազար տասներեք թվականի ---------
մայրիսի տասի

Ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքը, ի դեմս քաղաքապետ Մ. Ղարաքեշիշյանի, (անձնագիր AF0797777, տրված 04.02.2004թ. 053-ից) այսուհետ՝ Վարձատու, մի կողմից և Հայաստանի Հանրապետության ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ, Ծառայության աշխատակազմի Ստեփանավանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Ա. Պապյանը (անձնագիր՝ AH0564215, տրված 09.04.2008թ. 053-ի կողմից), այսուհետ՝ Վարձակալ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ ք. Ստեփանավան Միլիոնի 1 հասցեում գտնվող 83.88քմ մակերեսու տարածք՝ Վարձակալի կանոնադրական խնդիրներից բխող աշխատանքային գործունեության իրականացման համար:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին (սեփականության վկայական N 2502978 տրված՝ 07.01.2008թ. Անշարժ գույքի պետական կադաստրի Ստեփանավանի տարածքային ստորաբաժանման կողմից):

1.3 Վարձատուն երաշխավորում է, որ Գույքը վաճառված, գրավ դրած, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է նաև Անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի Լոռու տարածքային ստորաբաժանման կողմից տրված N ՄՏ-11032013-06-0017 միասնական տեղեկանքով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը Վարձատուն պարտավոր է հանձնել հանձման-ընդունման ակտով: Հանձման-ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

2.2 Սույն պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև 08.01.2013թ. թվականից ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 25.12.2013թ. /քանի՞ինգը դեկտեմբերի երկու հազար տասներեք թվականը/:

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է հարյուր հիսուն (135000) << դրամ գումար, ներառյալ հարկատեսակները: Պայմանագրի գինը 2013 թվականի համար կազմում է մեկ միլիոն վեց հարյուր քսան հազար (1620000) << դրամ:

3.2 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը Վարձակալը Վարձատուին է տրամադրում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3.3 Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Վարձատուն պարտավոր է՝

4.1.1 Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,

4.1.2 Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

4.1.3 Վարձակալած տարածքում ապահովել էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4.1.4 Ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին.

4.2 Վարձատուն իրավունք ունի՝

4.2.1 Պահանջել Վարձակալից՝ Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

4.2.2 Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ՝ պահանջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար.

4.2.3 Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել վարձավճարը:

4.2.4. Վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երկու ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձակալին:

4.3 Վարձակալը պարտավոր է՝

4.3.1 Ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար վարձավճարը, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձերը:
4.3.2 Ապահովել Վարձատուի անարգել մուտքը սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտ՝ դրա զննման և ստուգման համար,
4.3.3 սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությանը համապատասխան.
4.3.4 Ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

4.4 Վարձակալը իրավունք ունի՝

4.4.1 Եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտ կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից, իսկ եթե Օբյեկտի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը,
4.4.2 Օբյեկտը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում.
4.4.3 Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը:
4.4.4. Վարձկալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երկու ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի (զրո ամբողջ հինգ տոկոսի) չափով:
5.2 Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի (զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի) չափով:
5.3 Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:
5.4 Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի) չափով:
5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:
5.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության

պայմանում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վարձատուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վարձատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Վարձակալի ստացածով:

5.9 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> պայմանագրով վարձակության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ երեսուն օրյա ժամկետում պետական գրանցման:
8.2 Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են նոտարի կողմից և գրանցված են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:
8.3 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է համապատասխան նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներակայացնելու Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գրանցելու համար:
8.4 Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:
8.5 Պայմանագիրը կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և պարզաբանվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:
8.6 Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձակալ	Վարձատու
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն ք.Երևան Նալբանդյան 13 Հ/Հ 900011556355 ՀՎՀՀ 02505511 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	
_____ (ստորագրություն) Կ.Տ.	

համաձայն 25.03.2013 թվականին տրված թիվ ՄՄ/ԱգԿ/ 1/493-13 լիազորագրի հանդես է գալիս Ստեփանավանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Արթուր Պապյանը

2013 թվ., ապրիլի տասին, սույն պայմանագիրը վավերացվել է իմ՝ *Ստեփանավան* նոտարական տարածքի նոտար *Արսեն Հայությունյանի* կողմից: Պայմանագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Նրանց ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունները և ներկայացուցչի լիազորությունները ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցամատյան թիվ 1166

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն
ՀՀ „Պետական տուրքի մասին„ և „Նոտարիատի մասին„ օրենքների:

Նոտար՝ Ա. Հարությունյան

Կարված է, համարակալված
բաղկացած 3 (երեք) էջից

Նոտար՝ Ա. Հարությունյան

Նոտարական ակտի կոդ: 595-20171218-131-2053709
Նոտարական ակտի գաղտնագիր: ZCR70F

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, ք.Ստեփանավան
Երկու հազար տասնյոթ թվականի, դեկտեմբերի տասնութին

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ի դեմս համայնքի ղեկավար ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍԻ ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆԻ, ծնված՝ 23/07/1959թ-ին, ՀԾՀ՝ 3307590049, անձնագիր՝ AN0744777, տրված՝ 053-ի կողմից, 09/12/2013թ-ին, բնակության հասցե՝ ԼՈՌԻ, ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՄԻՔԱՅԵԼՅԱՆ 1 ՆՐԲ., 9 Տ, այսուհետ "ՎԱՐՁԱՏՈՒ" մի կողմից և Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի, իրավաբանական հասցեն՝ քաղաք Երևան, Նալբանդյան փողոց թիվ 13, ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, որի անունից համաձայն 10.12.2017թվ. վավերացված լիազորագրի հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Ստեփանավանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ ԱՐԹՈՒՐ ՍԵՐԳԵՅԻ ՊԱՊՅԱՆԸ, ծնված՝ 05/03/1974թ-ին, ՀԾՀ՝ 1503740196, անձնագիր՝ AH0564215, տրված՝ 053-ի կողմից, 09/04/2008թ-ին, բնակության հասցե՝ ԼՈՌԻ, ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՉԱՐԵՆՑԻ Փ., 10 Շ, 5ԲՆ, այսուհետ "ՎԱՐՁԱԿԱԼ" մյուս կողմից կազմեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Մեր կողմից 10.04.2013թվ. /ապրիլի տասին երկու հազար տասներեք թվականին/, կնքված և Ստեփանավանի նոտարական տարածքում թիվ 1166 գրանցամատյանով վավերացված անշարժ գույքի՝ Ստեփանավան քաղաքի, Սոս Սարգսյան փողոց (նախկին Միլիոնի) թիվ 1/մեկ/ հասցեում գտնվող վարչական շենքի 83.88քմ /ութսուներեք ամբողջ ութսունութ/ մակերեսով տարածքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը, որը 25.12.2015թվ. /դեկտեմբերի քսանհինգին երկու հազար տասնհինգ/ թվականին Ստեփանավան նոտարական տարածքում թիվ 2762 գրանցամատյան վավերացված համաձայնագրով երկարացված էր մինչև 25.12.2017թվ. (դեկտեմբերի քսանհինգը երկու հազար տասնյոթ) թվականի, համաձայն "ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող ոչ բնակելի տարածքի վարձակալության ժամկետը փոփոխելու մասին" 08 դեկտեմբերի 2017թվ. Ստեփանավան համայնքի ղեկավարի թիվ 17 որոշման՝ երկարաձգել 1/մեկ/ տարի ժամանակով:
2.Սույն համաձայնագիրը գործում է սկսած՝ 25.12.207թվ. (դեկտեմբերի քսանհինգից երկու հազար տասնյոթ) թվականի մինչև 25.12.2018 թվ. (դեկտեմբերի քսանհինգը երկու հազար տասնութ) թվականի ժամանակահատվածի համար:
3.Ոչ բնակելի տարածքի վարձավճարի չափը թողնել անփոփոխ՝ համաձայն 25.12.2015թվ. Ստեփանավանի նոտարական տարածքում թիվ 2762 գրանցամատյանով վավերացված համաձայնության 2-րդ կետի:
4.Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:
5.Սույն համաձայնագիրը կնքված է 4/չորս/ օրինակից, որի մեկ օրինակը պահվում է Ստեփանավան նոտարական տարածքում, մյուս երեքը տրվում է Կողմերին:

5.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՎԱՐՁԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնք,
ի դեմս համայնքի ղեկավար
ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍԻ ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆԻ
բնակ.՝ ք.Ստեփանավան, Միքայելյան փ.,1 նրբ., 9 տ.

ՎԱՐՁԱԿԱԼ
Հայաստանի Հանրապետություն,
ի դեմս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի, ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, որի անունից համաձայն 10.12.2017թվ. վավերացված լիազորագրի հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Ստեփանավանի սոցիալական ապահովության տարածքանին բաժնի պետ ԱՐԹՈՒՐ ՍԵՐԳԵՅԻ ՊԱՊՅԱՆԸ
բնակ. ք. Ստեփանավան, Չարենցի փ., 10 Շ, 5ԲՆ

Երկու հազար տասնյոթ թվականի, դեկտեմբերի տասնութին, սույն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ Ստեփանավան նոտարական տարածքի նոտար՝ Արսեն Հարությունյանիս կողմից: Համաձայնությունը Կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Նրանց ինքնությունը, գործունակաւությունը, իրավաբանական անձի իրավունակությունը, ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցամատյան թիվ 3257

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Արսեն Ֆրունզիկի Հարությունյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2017-11-30

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»

Համայնքային կառավարչական հիմնարկ (Համայնքային կառավարչական հիմնարկ)

Գրանցման համար	**92.181.995496**
Հիմնադրման տարի	**2017**
Գրանցման ամսաթիվ	**2017-11-30**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**50829184**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**06954104**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**20185496**
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	**ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ Փ / Շ / 1 ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 1901 ԼՈՌԻ ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	**256-2-22-33**

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	**Աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար**
Անուն Ազգանուն	**ՌՈՍՏՈՄ ՔՈՉԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ**
Անձնագրային տվյալներ	**AR0225974 2017-03-16 053**
Հասցե	**ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ Փ. / S / 4 ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 1901 ԼՈՌԻ ՀԱՅԱՍՏԱՆ**

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ

Քաղվածքը տրամադրող՝ _____ **Հրայր Մելիքջանյան**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **30-11-2017**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՓԱՀԱՏ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ